ներին պաշտման դրամ էին բաժանում, և աղքատներին կերակրում էին Վրթանէսի յիշատակի համար։ *

Զ.

Արարատեան երկրի մեծ գերութիւնից յետոյ, որ տեղի ունեցաւ ԺԷ. դարի սկզբում, Ս. Աջը մի անգամ էլ տեղահան եղաւ։ Այս անգամ Մեծն Շահաբասի հրամանով և իրար դէմ գժտուած Դաւիթ և Մելքիսէթ կաթուղիկոսների տուած առիթների շնորհիւ Ս. Աջը տարուեցաւ Ասպահան։ Ս. Էջմիածնից մինչև Նոր Ջուղայ հասցնելու համար Երևանու խանը նշանակեց զօրականներ, իսկ Ս. Աջին սպասաւորելու համար կարգուեցաւ և յատուկ քահանայ Յովհաննէս անունով։ Երբ որ Ասպահան քաղաքին մօտեցան, շահի հրամանով բոլոր Հայոց ազգը, որ այնտեղ բնակում էին, խաչով, խաչվառով, աւետարանով, խնկով ու մոմով և հոգևոր երգերով ելան Ս. Աջին դիմաւորելու և շատ պատուով բերին դրին «ի տուն Խօջայ Սաֆարին ընդ նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ և ընդ այլոց սրբութեանցն, որք անդէն կային։» Միևնոյն ժամանակ շահը հրամայեց տանել Նորջուղայ և Ս. Էջմիածնի քարերը։ 1614 թուին նոյն զգուշու-

* Առ. Դաւր. Լ.